է, որ նա թարգմանուած է ասորերէնից և ներկայացնում է
քաղուածք աւելի ընդարձակ բնագրից: Այս բնագիրը, որ ներ-
կայումս չկայ, եղած կլինի այն աղբիւր Խորենացու պատմու-
թեան համար, և Խորենացին յիշելով Մար-Աբաս Կատինայ ա-
սորի հեղինակի գիրքը՝ չէ կեղծել, այլ յիրաւի ունեցել է
այդպիսի աղբիւր: Այս է նորագիւտ ժամանակագրութեան բերած
առաջին հետևանքը: Այնուհետև կէտում մեզ բերուած են
մի քանի օրինակներ, որոնք ցոյց են տալիս, թէ անհարկաւոր
են եղել յարձակումները Խորենացու վրայ, իբրև թէ նա յե-
ղաշրջել է պատմական իրողութիւններ ըստ իր քմահաճոյքի:
Այսպէս, ցոյց է տալիս, որ այս Մարիբասեան ժամանակագրու-
թեան մէջ էլ Աբգարը կոչուած է հայոց թագաւորազն մեծ,
էլ Ներոնէի թագաւորը կոչուած է երկու անունով-Ներոն-
կես-Ագրիպաս. նոյնպէս էլ Հեղինէն (Աբգարի կին) կոչուած
է Միջագետքի թագուհի և Հռիփսիմեայ-(Հռիփսիմեանների հետ
նա կապուած է գնում): Այս է նորագիւտ ժամանակագրութիւնը
բերող երկրորդ հետևանքը: Բայց սրանից՝ պրոֆ. Մառ կանխա-
կան կարծիքներ է յայտնում այս ժամանակագրութեան, Սեբէոս-
եան Մար-Աբասի և Խորենացու Մար-Աբասի յարաբերու-
թեան մասին, Սեբէոսեան Մար-Աբասին աւելի մօտիկ համա-
րելով բնագրին, որի գրութեան ժամանակը համարում է Ն-
Զ դարի երկրորդ կէսը, իսկ Խորենացու պատմու-
թիւնը... ժամանակը աւելի ուշ:
1903 թուին լոյս տեսաւ պրոֆ. Խալաթեանցի ընդարձակ

ուսումնասիրութիւնը ռուսերէն լեզուով "Армянскіе Арша-
киды въ Исторіи Арменіи Моисея Хоренскаго" (իբրև
շարունակութիւն նրա Армянскій эпосъ ուսումնասիրութեան).
Այս գրուածքում հեղինակը մի առ մի քննում է Խորենացու
ամբողջ պատմական մասը՝ ժողովրդական աղբիւրներից քաղուածք-
ները և գալիս է եզրակացութեան, որ Խորենացու պատմութիւնը
չունի պատմական արժէք, այլ ունի գրական մեծ արժանաւո-
րութիւն և բերում է նորանոր փաստեր, թէ այդ պատմութիւնը
շարադրուած է Ը-Թ դարերում:

Այս ուսումնասիրութիւններս յարուցին առաջին կարգի քննա-
դատութիւններ և նորանոր ուսումնասիրութիւններ, այնպէս որ
Խորենացու անձի և նրա պատմութեան վերաբերեալ գրակա-
նութիւնը ընդարձակ ծաւալ ստացաւ, որի մանրամասն ծանօթու-
թիւնը արդէն մատենագիտութեան խնդիրներից է:

Խորենացու միւս աշխատութիւններից մէջ ամենից հետա-
քրքրականն է նրա "Աշխարհացոյց" կամ աշխարհագրութիւնը, որ
բովանդակում է մաթեմատիկական աշխարհագրութիւն իբրև նե-
րածութիւն և այնուհետ իրեն ժամանակի ծանօթ աշխարհի քաղաքական
աշխարհագրութիւնը: Ամենից մանրամասն է Հին Հայաստանի
բաժանումը նահանգների և գաւառների, բերդաքաղաքների շա-
րունակած քաղաքներով, նշանաւոր գետերով, լեռներով, ծո-
վերով, կենդանիներով, հանքերով: Հեղինակը ասում է, որ ինքը
հետևել է Պտղոմէոսի աշխարհագրութեան և նոյն Աղեքսանդ-
րացու Պապոսի աշխարհագրութեան: Բայց անկախ Հայաստանի վե-
րաբերեալ մասում նա ինքնուրոյն է կամ օգտուել է ազ-
գային աղբիւրներից:

Այս աշխատութեան մասին կատարուեցին կարևոր
գիտական քննութիւններ, որոնցից ոմանք հերքում էին նրա հա-
րազատութիւնը, այսինքն Խորենացուն պատկանելը, իսկ ոմանք
պաշտպանում էին վաւերականութիւնը:

Առաջին քննադատն եղաւ նշանաւոր հայագէտ Ժ. Սէն-Մարտէն, որ 1819 թուին կարծիք յայտնեց, թէ այս գրուածքը պարունակելով աւելի նոր ժամանակի աշխարհագրական անուններ, ինչպէս Ֆռանկ, Հռոմ, Դոյս (= Դանուբ գետ), Հրկան, Հաբաշ, Քաւարս չէ կարող Խորենացու գործը լինել, այլ կազմուած է ոչ վաղ քան տասներորդ դարում: Սէն-Մարտէնի այս կարծիքին դէմ ելան Վենետիկի Մխիթարեանները. որոնց համաձայնութեան գլխաւոր ապացոյցն այն եղաւ, որ նրանք հրատարակեցին Աշխարհացոյցի նոր, լաւագոյն բնագիրը չորս ձեռագրերի համեմատութեամբ (կցելով Խորենացու մատենագրութեան մէջ 1843 թուին), որոնցից այն բնագիրը, որ աւելի առաջ ունէր Սէն-Մարտէնը (Մարտէնի դիտողութիւնը), շատ աղճատուած էր և անհարազատ կտորներ էր պարունակում:— 1873 թուին նշանաւոր աշխարհագրագէտ Կիպերտը մի կենսոյում կարդաց այս Աշխարհացոյցի մասին և ասաց, թէ քաջ թողնելով Աշխարհացոյցի վերջին մասը և մի քանի եղանակով յաւելուածները մնացածը կարելի է վերագրել Խորենացուն, գրուած Ե. դարի առաջին կէսում: Իսկ այդ վերջին մասը, որ վերաբերում է Պարսկաստանին կազմուած պէտք է լինի նրա կարծիքով եօթներորդ դարում:— 1877 թուին պրոֆ. Ք. Պատկանեանն նորից հրատարակեց Աշխարհացոյց ռուսերէն թարգմանութեան հետ միասին, մանրամասն ծանօթութիւններով և յառաջաբանով: Նա կարծիք է յայտնում, թէ Աշխարհացոյց լեզուի կողմից ամենևին նմանութիւն չունի Խորենացուն և պարունակում է աշխարհագրական մի քանի անուններ, որոնք եօթներորդ դարից առաջ չէին կարող լինել (մեծ մասը Սէն-Մարտէնի յիշածներից): Բայց որանից նա ցոյց է տալիս, որ Աշխարհացոյցի մէջ յիշուած Կոստանդին Հնդկացին ոչ այլ ոք է, եթէ ոչ Զ դարում ապրող յոյն Կոսմաս Հնդկացուն, որի

Քրիստոնէական Տեղագրութեան հեղինակ է հեղինակը: Ուրեմն Աշխարհացոյցը, գրուած լինելով Է. դարում, չի կարող պատկանել Ե. դարի հեղինակ Մովսէս Խորենացուն, այլ Է. դարի պատկանելով, նրա հեղինակն է Անանիա Շիրակացին, որ Է դարում համբաւաւոր էր Հայաստանում իբրև մաթեմատիկոս: Համաձայն իր եզրակացութեան Ք. Պատկանեանը իր հրատարակութեանը դրել է այսպիսի վերնագիր. «Армянская география VII века по Р. Х. (приписывавшаяся Моисею Хоренскому)».

1881 թուին Վենետիկում Ա. Վ. Սուքրեան տպագրեց այս Աշխարհացոյց, ֆրանսերէն թարգմանութեան հետ միասին, ընդարձակ նոր ձեռագրից, որ շատ մեծ տարբերութիւններ ունի նախկին արտագրուած հրատարակութիւններից, մանաւանդ աւելի է ընդհանուր աւելի մանրամասնութեամբ (գրեթէ նախկին բնագրի կրկնապատիկ ծաւալով) և լեզուի համեմատաբար կարգաւորութեամբ: Հրատարակիչը անհամաձայնելի է համարում, որ Աշխարհացոյց անշուշտ Խորենացունն է: Արան ապացոյց է բերում լեզուն, որ միանգամայն նման է Խորենացու լեզուին, և հայեցակէտերը ու դատողութիւնները նմանութիւնը, որ նշմարւում է Խորենացու Պատմութեան և այս Աշխարհացոյցի մէջ: Բայց այս հրատարակութեան մէջ էլ մնում են այն յետոյի անունները (Ֆռանգ, Հռոմ, Մաջաս, Թուրք և այլն), որոնք կասկածելի էին դարձնում Աշխարհացոյցի Ե. դարում գրուած լինելը. ընդհակառակն, յիշւում են նրա մէջ երբեմն պարսկական անցերի անուններ, որոնք եօթներորդ դարում են ապրել: Հրատարակիչն այս անունները համարում է ընդմիջարկութիւններ:

Արդեօք այս Աշխարհացոյց Խորենացունն է թէ ոչ այս հարցը դեռ կարօտ է մանրագրական հետազօտութիւնների: Մինչև լեզուից դատել և եզրակացութիւն հանել չէ կարելի.

(Ք. Պատկանեանը Աշխարհացոյցի հեղինակ համարում էր ոչ Խորենացուն, այն-ինչ Անանիային հեղինակն էր կարծում): Յատուկ անունները և պատմական տեղեկությունները, որոնք ներքաշել են ուշ, թէ Աշխարհացոյցը 5. դարի գործ է, կարող են և ընդմիջարկություններ լինել, կարող են չլինել և հարկավ: Խորենացու և Աշխարհացոյցի մեջ եղած տեղեկությունների նմանությունը կարող է առաջ եկած լինել մի գրվածքի ազդեցությամբ մյուսի վրա, կարող է հետևանք լինել երկուսի մի հեղինակի գործ լինելուն: Վերջապէս դեռ խնդրի տակ է, թէ երբ է յօրինված Խորենացու Պատմությունը. եթէ վերջ ի վերջոյ ապացուցվի, թէ դա 5. դարի կամ ավելի ուշ ժամանակի գործն է՝ դրանով կլուծվի և Աշխարհացոյցի հեղինակի հարցը, և նա կվերագրվի Պատմության հեղինակին: Եթէ, ընդհակառակն, ապացուցվի, թէ Պատմութիւնը 8. դարի գործն է՝ այս դէպքում Աշխարհացոյցը կամ ուրիշ հեղինակի գործ պէտք է լինի ընդունել կամ ապացուցանել, որ նրա մեջ գտնուած կասկած յարուցանող փաստերը ընդմիջարկություններ են:— Գուտշմիդը գերմանացի գիտնականը, ինչպէս միշտ, համարելով Խորենացու Պատմությունը 7. դարի գործ՝ հիմնվում էր ի միջի այլոց Աշխարհացոյցի վրա, որը նա համարում էր անկասկած Խորենացու գործ և անկասկած 7. դարում գրուած:

Պիտոյից գիրք: Խորենացուն է վերագրվում «Պիտոյից» կոչված գիրքը: Այս գրվածքը, որ գրեթէ Պատմութեան չափ մի ընդարձակ գործ է՝ շարադրված է Թէոնոսի անունով աշակերտների համար և պարունակում է հռետորական խրատներ և բազմաթիւ փորձնական օրինակներ՝ շարադրություններ գրելու այս կամ այն ճարտասանական ձևով: Այդ ձևերը տասն են— Գովք (որի անունով անվանված գիրքը

կոչված է Պիտոյից), խրատ, եղծումն, հասարակաց տեղի, Ներբողեան, Պարսաւ, Բաղդատութիւն, Քաղաքանութիւն, Ստորագրութիւն և Դրութիւն: Այս ձևերից իւրաքանչիւրի էութիւնը համառօտ բացատրելուց յետոյ հեղինակը տալիս է մի քանի օրինակ (5–7), այնինչ շարադրութիւն որոնց նիւթի մասին պահանջված չէ ոչ: Օրինակ, Ներբողի ձևով գրված են ներբողական (գովասանական) շարադրութիւններ՝ Մովսէս մարգարէի, Յոբնոս, գարնան, պատերազմի և այլոց մասին: Բաղդատութեան ձևով բաղդատված են առանձին շարադրութիւնների մեջ Աբրահամ և Եղիա, մշակութիւն և զինուորութիւն, գարուն և ամառ, այր և նաւահանգիստ, ցիւ և արջառ, ձիթենի և արմաւենի: Շարադրութիւններից իւրաքանչիւրը բաժանված է հատուածների, նախապէս բացատրված կանոնների համաձայն, որոնցից աշակերտը կարողանայ ըմբռնել, թէ ինչպէս և ինչ մասերից է նա բաղկացած:

Պիտոյից գրքի լեզուն, համեմատած Պատմութեան հետ, շատ աւելի մութ է և յունաբանութիւններով լցված, այնպէս որ դժուար հասկանալի է գրաբարի մէջ քիչ վարժութիւն ունեցողին: Գործ են ածւում այնպէս նաև խորթ, օտարոտի քերականական ձևեր, օրինակ՝ «որ նեւ անցիւ» (=յանցիւ), «նմինչ» (=նորին), «ցուցանիւր» և այլն (=կէսկոչական և հրամայական սեռերի համար, փոխանակ՝ ցուցանէր և այլն), «նէ, նէյրա, «ևն (=նա, նորա՝ իգական սեռ): Այս պատճառով՝ նա ի նկատ առնելով բովանդակութեան նուազ հետաքրքրականութիւնը՝ շատերը կարծել են, թէ Պիտոյից գիրքը Խորենացու գործը չէ: Սակայն [illegible] գերմանացի գիտնականը մանրամասն քննելով Պիտոյից գրքի բովանդակութիւնը և լեզուն՝ եկաւ այն եզրակացութեան, թէ նա անտարակոյս Խորենացունն է:— Կարելի է կարծել,

որ այս գրուածքին Խորենացին գրել է արտասահմանից նոր վերադարձած ժամանակ, երբ դեռ գտնվում էր յունաբանական ճեմ-ւոր և ասորաբանական ուսման ասպարէզի ազդեցութեան տակ: Մա-րիներ ունենալով նրա լեզուն աւելի հայկական ոճական կեանքի և մշակման հայերէնին ընտրութեան շնորհիւ, պա-կասելով սահման ոճի մշակութիւն և կարող, որ երևում է Պիտոյից գրքում և ամենայաջող կերպով արդարացուել է Պատմութեան մէջ:

Խորենացուն են վերագրւում և ուրիշ մանր գրուածքներ.— Պատասխանի թղթոյն Սահակայ (Արծրունւոյ), ի Նո-գեայ վանքում գտնուող Սուրբ Աստուածածնի պատկերի մասին պատմական տեղեկութիւն, Ճառ Վարդավառի, Պատմութիւն Հռիփսիմեանց և Ճառ Հռիփսիմեանց: Սրանցից առաջինը քաջ ընդհանուր հետաքրքրութիւնը ունի և մատենագրա-կան նշանակութիւն Խորենացու անձի և Պատմութեան նկատ-մամբ: Արծրունեաց Սահակ իշխանի թղթում յիշուած է Խորենացու Պատմութիւնը իբրև «Գիրք Քաղաքացութեան ին-խանին». բաց պատասխանի առաջաբանը շատ յիշեցնում է Պատմութեան առաջաբանը՝ մտքով ու ոճով, նոյն-իսկ միևնոյն նախադասութիւններ գործածութեամբ:— Պատմութիւն Հռիփ-սիմեանց շատ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում այն ճանապարհի և տեղերի մասին, որով եկան Հռիփսիմեանք:— Հռիփսիմեանց ճառը, որ շատ երևոյթին գրուածքայա կոյսե-րի գոնին եկեղեցում կարդալու համար՝ հետաքրքրական է այն կողմից, որ ներկայացնում է Խորենացու նախընթաց գրական գործը: Հեղինակը այս գործը կոչում է «առաջին երգուհք ի մեր Նորաբոյս հօգւոյս, որ չէր սիրէ, սրբե-ցելոյ իմաստէ բարւոյն»: Գրուածքն էլ պարունակեա աղխոյժով և վառ երևակայութեամբ արդարացնում է այդ խօսքերը: Լեզուն արուեստական է, բայց աւելի պարզ

է և յուսահատութիւնը այսպէս քան Պիտոյից գրքում. ուստի եթէ Խորենացունն է ինչպէս՝ պէտք է ենթադրել, որ գրուած է դեռ յունական ուղևորութիւնից առաջ:— Սրա մէջ պա-տահում են մի քանի, կարծ նախադասութիւններ, որոնք գտնվում են և Պատմութեան մէջ:

Այս մանր գրուածքների մասին դեռ չեն եղած գիտնա-կան հետազօտութիւններ, ուստի և նրանց հարազատ կամ ան-հարազ լինելու հարցը դեռ կարօտ է քննութեան:

Խորենացուն վերագրւում են շարականները (Կարգաց Քա-հանայի, Մաշտոցի և ուրիշները) հետևեալ թարգմանու-թիւնները.— Սուտ Կալլիսթենէսի Պատմութիւն Մեծին Աղեք-սանդրի.— Փիլոնի Եբրայեցւոյ մատենագրութիւնք.— Ճառք Գրիգորի Նազիանզացւոյ.— Գրիգորի Նիւսացւոյ մի ճառ մանկունքն բեթղեհէմի.— Ճառք Բարսղի Կեսարացւոյ, և համանօրէն Սեղոսի խրատք և Աղոմփրոնի Աւագի: Խորենացունն են համարվում այս գրուածքների թարգմա-նութիւնները նաև ոճի նմանութիւնը դարերից և երկրորդ՝ այն այլ ասելու փոխառութիւններից, որ արել է Խորենացին իր Պատմութեան մէջ այս գրուածքներից:

Երբ է գրուած Խորենացու Պատմութիւնը: Ի նկատի առ-նելով այն ժամանակագրական տեղեկութիւնները, որ Խորենացին տա-լիս է իր մասին, և բոլոր այն վկայութիւնները, որ տալիս են Խորենացու մասին մեր պատմագիրները՝ ընդհանուր պարա-ծուած համոզմունք էր, թէ Խորենացին ապրել է ուրեմն գրել է Ե. դարում: Մասնաւորները դարի կէսերից, երբ բանասէրները համեմատ աւելի մեծ ուշադրութեան դարձրեցին Պատմութեան գրուելու ժամանակին՝ պակասաւոր կարծիքներ էին յայտնվում. նաև ենթադրում էին, թէ Պատմութիւնը գրուած պէտք է լինի Վարդանանց պատերազմից առաջ. քանի որ այդ պա-

գերազմի մասին յիշատակութիւն չէ անում. յետոյ ժամանակը ընկերութեց մինչև վաթսնական թուականները: Դիւլորիէ ևս թէև Խորենացու Պատմութեան ուսումնասիրութեանց առթիւ ժամանակին և քաղաքականի պարագայի այլևս չէ նրա գրութեան ժամանակը ընկերութեց աւելի ուշի ներքև: Կարապետ Եզեանցը 1887-ին, հիմնուելով մի պատմական վկայութեան մի ժամանակագրական վկայութեան վրայ, Պատմութեան գրութեան ժամանակը դնում էր 486-ից մինչև 490 թուականներում. իսկ 1898-ին, մի ուրիշ հիմունքով, Պատմութեան գրութեան ժամանակը դնում էր Ե. դարի քսան վերջի և Զ-ի սկզբի մէջ:- Յ. Հ. Մաշեան (1892-ին), համեմատելով Պատմութիւնը Մուր Կալկիւթեցեան Ճեմարանի ձեռագիր վարքի-ների, որի թարգմանութիւնը նոյնութեամբ վերագրուում է Խորենացուն, ենթադրում է թէ վարքը թարգմանուած լինի ոչ ուշ 486-ին և այդ ժամանակ շատ քիչ յետոյ գրուած լինի Հայոց Պատմութիւնը:

Բայց 1892 թուից սկսած մինչ քննադատական հայեացք երևան եկաւ քննադատութեան մէջ, որ մինչև այժմ դեռ յեղյեղուում քաղաքաթիւ թեր և դէմ կարծիքներ առաջ բերելով, բայց դեռ չէ յանգել վերջնական եզրակացութեան: Այս հայեացքը կայանում է նրանում, թէ Մ. Խորենացու Պատմութիւնը գրուած է ոչ թէ Ե. դարում, այլ շատ աւելի ուշ, Է-Ը-Թ դարերում (զանազան քննադատների կարծիքներ), որովհետև նրա մէջ գործ են ածուած աղբիւրներ և կան պատմական և աշխարհագրական գիտելիքներ այն դարերից: Այս հայեացքը արտայայտող և պաշտպանող եղաւ Ֆրանսիացի հայագէտ, այժմ հանգուցեալ պրոֆ. Կարրիէր, որ և շատ հետևողներ գտաւ:

Ճիշդ է, Կարրիէրից դեռ առաջ էլ յայտնուած էր կարծիք Պատմութեան աւելի նոր ժամանակի գործ լինելու

մասին, (օրինակ՝ Լաւրոզ գիտնականը դեռ 18-րդ դարում կարծում էր, թէ Պատմութիւնը գրուած է ոչ ուշ քան Թ. դարում. իսկ 1883 թուին Գուտշմիդ Պատմութեան գրութեան ժամանակը որոշեց 634-642 թուականների միջոցում). Բայց այս կարծիքները արձագանգ չէին գտնում գիտնականների մէջ, մինչև որ Ա. Կարրիէրը շօշափեց Խորենացու Պատմութեան աղբիւրների հարցը և սրանց հիման վրայ հաստատեց իր հայեացքը:

Կարրիէր համեմատեց Խորենացու Բ, ԿԹ գլուխը (Կոստանդիանոս Մեծի վարքի մասին) Սեղբեստրոսի վարքի վկայութեան հետ, որի հայերէն թարգմանութիւնը կցուած է Սոկրատի եկեղեցական պատմութեան հայերէն թարգմանութեան: (Սոկրատի և Սեղբեստրոսի երկու հայերէն թարգմանութիւն գոյութիւն ունի. մէկը համառօտ և սառոյն յունարէն թարգմանութիւնն է յունարէնից, միւսը՝ համառօտուած և պարզաբանուած, և պարունակում է բազմաթիւ ընդմիջարկութիւններ թարգմանչի կողմից: Առաջինը կոչում են Մեծ Սոկրատ, երկրորդը՝ Փոքր Սոկրատ): Համեմատութիւնից Կարրիէր եզրակացրեց, որ Խորենացու վերոյիշեալ գլխի համար իբրև աղբիւր է ծառայել Սոկրատի հետ կցուած Սեղբեստրոսի վարքի հայերէն թարգմանութիւնը: Ահա մի փոքր բնորոշ հատուած համեմատութեան համար:

Խորենացին ունի.- "Բայց յետոյ հրապուրեալ ի կնոջէն իւրմէ Մաքսիմինայ (կամ Մաքսիմինեայ) ի դստերէն Դիոկղետիանոսի՝ յարոյց հալածանս եկեղեցւոյ, և ըստ այսմ վկայեալ ինքն եղեփանդական բորոտութեամբ լի բոլոր ընդհանուր մարմնոյն ապականեալ վասն յանդգնութեանն: Զոր ոչ կարացին բժշկել արքունական կախարդքն և մարսիկեան (կամ մարզիկեան) բժիշկն" և այլն:-

Փոքր Սոկրատի Սեղբեստրոսի վարքն ունի.- "Բայց հրապուրեալ ի կնոջէն իւրոյ Մաքսիմինեա ի դստերէն Դիոկղետիանոսի և առաւել հալածանս եկեղեցւոյ յարուցանէր.- և բազում

եղեն վկայք... յայնժամ եղեփանդական բորոտութիւն կալաւ զմա-
րմին թագաւորին Կոստանդիանոսի առաջանէր, որպէս ի խրատ
առ ի յԱստուծոյ լեալ: Վասն որոյ արիողեան (կամ արիողական)
կախարդք և արիողեան բժիշկք ոչ կարացին օգնել" և այլն:

Մեծ Սոկրատի Սեղբեստրոսի վարքն ունի.—"Իսկ զի նա
վրդովելոյ զնա հալածել քրիստոնէից... իսկ Կոստանդիանոսի
զաւուր կամաւոմբեայ Թիկնեբրանոսի գուսար ունելով զին
կեացուցանէ ի քրիստոնէից ասպառ. քէն այս եղեփանդական
բորոտութիւն զար բոլորն ընկալեալ մարմնոյ վիրաւորեալ
ուստի ամենայն ասացեալ արիողեանն կախարդք և մաքրել
բժիշկք... ոչ կարացին օգնել նմա" և այլն:

Երբ Սոկրատի կարճութեան և Սեղբեստրոսի վարքի հ-
ին թարգմանութիւնները, ինչպէս երևում է ձեռագիրների ց-
րուցական յիշատակարաններից, կատարուել են եօթներորդ դա-
րի վերջերում (Սեղբեստրոսի վարքը 678 թուին, Երան Գրիգոր
Զորափորեցու ձեռքով, իսկ Սոկրատը 696 թուին, Փիլոն Տի-
րակացու ձեռքով): Ուրեմն կատարած էր եզրակացութիւնը.—
եօթներորդ դարի վերջերում գրուած աղբիւրից օգտուող Խոր-
ենացու կարծութիւնը չէր կարող Ը. դարից առաջ գրուած լի-
նել: Այս մտքը աւելի որոշ արտայայտեց Մրաւքանը, թէ "Ը
թուից առաջ Խորենացու Պատմութիւնը չկար":

Հետազօտութիւնը շարունակելով՝ Կարիեր և ուրիշ հետա-
ները գտան ուրիշ գրուածքներ Է–Ը դարերից, որոնք աղ-
բիւր էին ծառայել Խորենացու Պատմութեան. օր. Սոկրատի
եկեղեցական պատմութիւնը (հայերէն թարգմանութիւնը) (Ս. Ն-
նէի և Կիրլոս դարձի մասին, Զիրաւր Ծաղկապատմարի նե-
րագիրը և այլն), Մաղաղաս և այլն: Հերձական կրօն. Խալ
և Մրաւքան Ժամանակագրութեան գրան և հրապարակեցին մի
ւական ընդարձակ հատուած Մեծ Սեղբեստրոսից, որ գրեթէ բա-
ռացի նոյնով պատմում է և Խորենացու մօտ: Այս հատուածն

Մեծ Սեղբեստրոսի մէջ (Սեղբեստրոս Պապի համար ասուած).
"Զմանկի ամբարշտութիւն և մարգահաճութիւն առ ի նո-
րա վարս տեղի գտանէր ոչ ուրեք կարասյին. այլ հեզև բա-
րեհամ և բարեխօսօղ գոլով՝ և երկնայնոյն կարգադրեալ
առողջութեամբ զինքն քողոքիկ ցուցանէր. վասն զի փոյր պես-
ցեամբ հրեշտակական. քանիւ զրամապայծառացեալ, գոր-
ծով սուրբ, մարմնով արդարափայլեալ, աստ(ա)սիրէ անձնո, խորհրդակ-
ցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սի-
րով անխղճաւոր: Այլ վասն զի կբոլորան նորա կուսութիւնն
ու եմ քաւական աւել առ ի մասնաւորական նորա գոր-
ծեցելոյ զարձուցիկ կբանաւ":

Խորենացու մէջ (Գ. կէ) (Ս. Մեսրոպի մահին).—"Զմանկի
ամբարշտութիւն և մարգահաճութիւն ի նորա (կամ առ
ի նորա) վարս տեղի գտանել երբէք ոչ կարացին. այլ հեզ
և ցաւակամ և բարեխօսօղ գոլով՝ և երկնայնոյն կար-
գադրեալ առողջութեամբ զինքն քողոքիկ ցուցանէր: Զմանկի փոյր
պեսցեամբ հրեշտակական, մրոտ ծննդական, քանիւ պայծառ,
գործով ծուծիալ, մարմնով արդարափայլեալ, աստասիրէ անձնո,
խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող,
սիրով անխղճաւոր, ուսուցանելով անձանձրոյթ: Այլ վասն զի
կբոլոր ուղղութիւնս նորա ու քաւական եմ աւել ի հան-
գիստ նորա նշխարացն զարձուցիկ կբանաւ"

(Խորենացու մէջ "մրոտ ծննդական" և "ուսուցանելով
անձանձրոյթ" խօսքերը՝ հեղինակի աւելացրածներն են բնագրի
մէջ, ցոյց տալու համար Ս. Մեսրոպի երախտիքը տառերի գիւ-
տի և հայ ժողովրդին ուսուցանելու գործում:—Սեղբեստրոսի
վարքի թարգմանութեան մէջ "զրամ+ա+պայծառ+ացեալ" զրա-
ռայի կազմուած է յունարէն բնագրի բառի համաձայն, որ
Խորենացու մէջ արտայայտուած է աւելի պարզ բա-
ռով՝ "պայծառ"):

Այս գիրքը կարծես անպատճառ ներդրել պէտք Պատմու-
թեամբ գրուեցաւ ժամանակի հարցը, որի հետ և նրա վաւերա-
կանութիւնը: Զինուեցին նոյն-քան հերքողներ, որ արդէն Պատ-
մութեան վրայ. աւելցրին "սուտ" բառը, (Պատմութիւն այդն Խորենացու), որանով համեմատելով շատ շատ, թէ այդ Պատ-
մութիւնը մի անվաւերական կեղծիք է, ուշ ժամանակի մի
անծանօթի կողմից յարմարուած ու վերագրուած Ե. դարու
պատմիչ Խորենացի անունին:

Բայց այս աղբիւրներից, որոնք մտածում էին Պատմու-
թեան ուշ ժամանակի գործ լինելը՝ զինուեցին, համ հայոց
արդէն, ուրիշ պարսկական և աշխարհագրական հրաղութիւններ,
որոնք նոյն քանն էին ապացուցանում: Այսպէս Խորենացին
գիրք (Բ. մզ) Առաջին, Երկրորդ, Երրորդ, Չորրորդ Հայք, այն-ինչ
այդ բաժանումն եղաւ Յուստինիանոս կայսեր հրովարտակով
536 թուին:— Խորենացին յիշում է (Գ. մը), թէ Զաւրոսի (Բ)
հասաւ մինչև Բիւթանիա. այն-ինչ պարսիկները այստեղ հասան
են առաջին անգամ միայն 608 թուին:— Խորենացուն
ծանօթ է Սենեքի գործածութիւնը. (Խորենացու այս խօսքը
—"Եւ կցեցուցանող բեր կենոց ի պաւաղեայ քանանայոց
և անուն հոչէ ազգին Սպրուներ", թէ է, մեծնելով այսպէս
"որան չեռնոյներ հագցնող է ընդդրում քանանայոց սեռուն-
ներից և այդ ցեղի անունն դնում է Սպրունի. Սպրու-
նի բառն էլ բացատրում էին յունական [illegible] (Sprun-
gant) բառից, որ նշանակում է ցեռնոյ).— ծանօթ է և պ-
տառաքաղ. այն-ինչ այս տարբերակները շատ աւելի
ուշ ժամանակի գործածութեան մէջ մտան, Է-Թ դարե-
րում, ուրեմն նրանք չէին Ե. դարում, և Խորենացին
նրանց չէր գիտենալ.. երբ Ե. դարում չէին եղել գոր-
ծա:— Եւ այլն:

Միւնչև այսպէս հերքողներ երևան էին գալիս մի

հայոցից բնաւորութեան դրող հերքողութիւններ, որոնք
ցցրում էին ապացուցանել, թէ Խորենացու անունը դրող Պատ-
մութիւնը Է-Թ դարերի գործ է՝ միւս կողմից երևան էին գա-
լիս ջատագովութիւններ և հերքողութիւններ, որոնք աշխատում
էին հերքել վերոյիշեալ մերժողական փաստերը կամ նրանց
այլապէս բացատրել, նպատակ ունենալով ապացուցանել, թէ
Պատմութիւնը արդարև Ե. դարի գործ է:

Այսպէս Վիեննայի Միխիթարեան Հ. Բ. Սարգիսեանը 1893-ին
հրատարակեց մի ընդարձակ ուսումնասիրութիւն, որի մէջ աշխա-
տում էր ապացուցանել, թէ Սոկրատի և Խորենացու մէջ ե-
ղած նմանութիւնները պէտք է բացատրել հակառակ կերպով.
—Խորենացին օգտուել է յունարէն բնագրից, իսկ Սոկրատի
հայ թարգմանիչը օգտուել է Խորենացուց:

Իսկ Սեղբեստրոսի վարքի և Խորենացու մէջ եղած
նմանութեան (Յովհաննիսեանի վարքի մասին.— Ն. Մառը
բոլոր փիլիսոփայութիւնը դեռ չէր նկարուած) նա կարծում էր,
որ թէ՛ վարքի հեղինակը և թէ Խորենացին միմեանցից անկախ
կերպով օգտուել են ընդհանուր յունարէն մի աղբիւրից, որի
բնագիրն էլ հրատարակեց Բ. Սարգիսեանը:

1897 թուին առաջին անգամ տպագրուեց Սոկրատը և
Սեղբեստրոսի վարքը (ընդարձակ և համառօտ միասին), Մեսրոպ
Վ. Տէր-Մովսիսեանի ջանքով: Հրատարակիչը առաջաբանում
մանրամասն քննութիւններից եզրակացնում է հետևեալը. Խորե-
նացին չէ ծանօթ Սոկրատի եկեղեցական պատմութեան,
և ոչ էլ որևէ կերպ օգտուել նրա յունարէն կամ հայերէն
բնագրից, բայց օգտուել է Սեղբեստրոսի վարքից, թէև ոչ մեր
ձեռքը հասած հայերէն թարգմանութիւնից:— Մովսէս Խորենա-
ցին շատ յայտնի և համարեա կանոնական նշանակութիւն
ստացած հեղինակ էր այն ժամանակ, երբ կրճատում էր [illegible]
Սոկրատը և համառօտը խոնարհելով նրա մեծ հեղինակութեան

առաջ՝ նոյն-իսկ իր քննադատը չար այնժմ է փոխում, շարունակ օգտուելով Խորենացուց": Այս մտքերը յայտնելիս՝ Ն. Մառը վարկածները ինչպէս չունէր Մեծ Սեղբեստրոսից փոխառութիւ- Ն. Մառի ներքոյի մէջ: Երբ այս փոխառութիւնը հրապարակուեց՝ նոյն քննադատը հարցից փոխեց յօգուտ նոր հայեացքին թէ Խորենացու Պատմութիւնը Է-Ը դարերի գործ է:

1898 թուին Գրիգոր Խալաթեանցին մանրամասն և հիմնահամեմատութեամբ անպարտելի ձեւով ապացուցեց, որ փոքր Սոկրատը խմբագրուել է Խորենացու Պատմութիւնից, և խմբագրի ընդարձակը համառօտելիս՝ անպայման օգտուել է Խորենացու Պատմութիւնից իբրև հանրածանօթ և հեղինակաւոր աղբիւրից: Նրա այս ուսումնասիրութիւնը, որ պատճառեց "Մշակ" լրագրու- հասնելով Մեծ Սոկրատի հեղինակութեան՝ հիմք մնաց:

1899-ին լոյս տեսաւ "Սեբէոսի Պատմութիւնը և Մովսէս Խորենացին" ուսումնասիրութիւնը, որի մէջ ապացուցանում է թէ Է. դարի հեղինակ, Սոկրատի և Սեղբեստրոսի վարքի հայերէն թարգմանութիւններից քաղած առաջ գոյութիւն ունէր արդէն Խորենացու Պատմութիւնը և հրապարակուած էր: (Մշեւ. էր. 258 և 259):

Վերջապէս 1901-2 թուականներին անգլիացի հայագէտ Կոնիբիր հմտալից քննութեան ենթարկեց նորից Խորենացու այն հատուածները, որոնք նմանութիւն ունէին և փոխառութիւն էին համարվում Մեծ և փոքր Սոկրատից, Սեղբեստրոսից, Մալալասից, առհասարակ բոլոր այն աղբիւրներից, որոնց վրայ հիմնուել էին եղել Կարրիէր և նրա հետևողները: Նա յայտնում թէ սխալուած ինքը, ենթարկուելով Կարրիէրի մերկացումների յօգուտներին, համարել էր, թէ Խորենացու Պատմութիւնը ուշ ժամանակի գործ է: Միայն աւելի նոր ծանօթանալով չյայտնուած աղբիւրներին՝ ինքը փոխեց իր կարծիքը և այժմ համոզուած է որ այդ Պատմութիւնը գրուած է Ե. դարում: Նրա եզրակացու-

թիւններից գլխաւորները սրանք են. Խորենացին ինքն է ծառայել իբրև աղբիւր փոքր Սոկրատին. Մեծ Սոկրատի և Մեծ Սեղբեստրոսի հայերէն թարգմանութիւնից օգտուել է արդարև Խորենացին, բայց այս թարգմանութիւնը չէ կատարուել Է. դարում Փիլոն Տիրակացու ձեռքով, ինչպէս բոլորն ընդունել են առաջ, այլ կատարուած է շատ վաղ, Ե. դարում և գուցէ հէնց իր Խորենացու թարգմանութիւնն է: Լեզուն յիշեցնում է Ե. դարի ուրիշ թարգմանիչների լեզուն: (Գրիգոր Խալաթեանցն էլ վերոյիշեալ յօդուածում յայտնել էր կարծիք, թէ Մեծ Սոկրատն ու Սեղբեստրոսը աւելի հին թարգմանութիւն են, բայց ապացոյցները թողել էր ուրիշ ժամանակի): Մալալաս իբրև աղբիւր չէ ծառայել Խորենացուն, այլ երկուսն էլ օգտուած են անհայտ ձեւով մի հնագոյն նոյն աղբիւրից, որ դեռ չորրորդ դարում գոյութիւն ունէր:

Այս փաստերը բաւականաչափ հերքում էին Կարրիէրի և նրա հետևողների եզրակացութիւնը, որ զրկում էր Խորենացուն իբր թէ աւելի նոր ժամանակի աղբիւրներ գործածելուց: Նոյն-իսկ նորագոյն կարծիք պաշտպանողները յայտնեցին, որ Կարրիէրի բերած հիմքերը արդէն հնացել են իրանց աչքի, և երբ Խորենացու Պատմութիւնը դեռ ուշ ժամանակի գործ համարել՝ այդ ուրիշ փաստերի հիման վրայ պէտք է լինի:

Իբրև այսպիսի նորագոյն փաստ պէտք է համարել պրոֆ. Մառի յայտնած կարծիքը 1902 թուի սեպտեմբերին Մար-Աբասեան աղբիւրի մասին արած կենսագրութեան մէջ, որ վերը յիշեցինք: Հայագէտ պրոֆեսորը ասում է հետևեալը. «Խորենացու Պատմութեան գրուելու ժամանակը որոշելու անհնարին հիմքերն են նրա պատմութեան ընդհանուր ոգին, որ պէտք է հերկում ազգային է, երկրորդ՝ որ հեղինակը սիրահար է յունական ուսման և գիտութեան, և երրորդ՝ որ նա ընդունում է անհիմն պատմական աղբիւրներ, որոնք յայտնապէս առա-

բացման ժողովն ունին նաև ազգային նշանակութիւն, որովհետ նշանաւոր չափով հիմք են կազմում նրա պատմութեան: Այս-պիսի մէջբերումները, հասկանալի է, չէ կարող վերագրուել հին-գերորդ դարին, որ հայոց քրիստոնէական գրականութեան առաջին դարն էր, այլ բաւական աւելի նոր ժամանակի, երբ բացառապէս ասորական ուղղութեանց աւանդութեան կարգն էր անցած, և նրան փոխարինող յունաբանութիւնը գրականու-թեան մէջ հարկադրել էր առաջ բերել ազգային ուղղու-թիւն: Խորենացու պատմութեան ժամանակի այս ընդհանուր որոշմանը... ըստ իս համապատասխանում են և նրա արտա-քին յատկութիւնները, ի միջի այլոց և լեզուն՝ որով գրուած է": Ուրիշ տեղ նոյն չեզոքման մէջ պրոֆ. Մառը յայտնում է, թէ Խորենացին, թէև յունասէր, արհամարհում է ասորական ու-սումը և վրդովւում է իր գրական հակառակորդների, ա-սորասէրների հետ. զանգ է գործ դնում նուաստացնել ասոր-ների նշանակութիւնը, որոնցից հասել ասորական գրութեան համբաւի հետ, որ դեռ չէր թուլացել Հայաստա-նում:

Սակայն այս ընդհանուր հերքող գծերը չեն բաւական Խորենացու պատմութիւնը Ե. դարի գործ համարելուն: Այդ-պիսի ոգին, որ այնպէս վառ կերպով նշմարւում է այս պատ-մութեան մէջ, հետևանք է ոչ թէ ուշ ժամանակի (Է-Ը դա-րերում այսպիսի ոգի չէ էլ նշմարւում մեր հեղինակների մէջ), այլ այն աշխարհի, որի մէջ երկար ժամանակ մնացել է հեղինակը և բարձր կիրթութիւն ստացել, այսինքն՝ Յունաս-տանի: Յունաց կայսրութիւնը կարգաւորող, յոյների ազգային ինքնաճանաչութեան, ազգային հպարտութեան և սիրուն ան-կաշկանդ [illegible] եղողը չէր կարող օտար մնալ այս ոգուն: Ինձ չէ կարծելու, թէ այս ոգին չէր կարող արտայայ-տուել դեռ Ե. դարում, որ մեր քրիստոնէական մատենագրու-

թեան առաջին դարն է եղել: Թէև որ Հայաստանում գո-րումէր ասորական դպրութիւնը, անկասկած հայոց նորաբող-բոջ մատենագրութիւնն էլ գտնուած էր նրա ազդ. բայց այս դրութիւնը երկար չտևեց՝ հազիւ հասաւ մինչև Ե. դարի կէսերը: Յիշենք էլ, Խորենացուց էլ գիտենք, որ գրե-րի գիւտի ժամանակ, Ե. դարի սկզբում, հայոց մշակութ յարա-բերութիւնը Ասորիքի հետ էր. այնտեղ գնաց Ս. Մեսրոպ՝ գրերի գիւտը հոգալու, այնտեղ ղարաւ իր աշակերտներին՝ ուսման-կացու. այնտեղ էին ուղարկում և կաթողիկոս, արքէն ուսուծ, աշակերտների՝ թարգմանութիւններ անելու, և մենք գիտենք, որ մեր անդրանիկ թարգմանութիւնները միրաւր ասոր-երէնից են կատարուած: Բայց հէնց Ս. Մեսրոպի կենդանու-թեան ժամանակ (գուցէ թէև հետևանք նրա ձեռնասարկա-ւորութեանց՝ դէպի Բիւզանդիոն), մի ուրիշ հոսանք սկսուեց-հոսանք դէպի արևմուտք, դէպի յունական ուսումը: Որչափ բնորոշ և հետաքրքրական է Խորենացու այն վկայու-թիւնը, թէ Ս. Մեսրոպ և Սահակ աւագ աշակերտներից Յով-սէփին և Եզնիկին ուղարկում են Եդեսիա թարգմանութիւն-ներ անելու, պատուիրելով որ այնուհետև նրանց նոյն գործի համար ուղարկեն Բիւզանդիոն: Սրանք գնում են, բայց լուրեր ստանալով, թէև թէ մեծ ուսուցիչները ուրիշներին են մղաւիր Բիւզանդիոն ուղարկել իրանց ի-րանց դէմ, առանց ուսուցիչների թոյլտուութեան քաղաքն դիմում են Բիւզանդիոն, "Նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց": Սրանց նախանցելով՝ Բիւզանդիոն են գնում նրանց ընկերներն էլ, Ղևոնդ և Կորիւն, գալով իրանց դէմ: Այնտեղ են գնում վերջապէս և Յով-հան ու Արձան: Որքան ուրեմն բուռն պէտք է լինէր երիտասարդ սերունդի մէջ ձգտումը դէպի յունական դէպի արևմտեան քաղաքակրթութեան լոյսը, որ այս աշակերտ-

ները, իրանց պաշտելի ուսուցիչների կամքի հակառակ, ընթեր-ցումը դէպի այն են դիմում: Երբ այս աշակերտներից շատե-րը [illegible] թուականներին, ասորական դպրոցին աշակեր-տելուց յետոյ, այնքան բուռն ձգտում ունէին դէպի Յու-նաստան, դէպի յունական ուսումը, որչափ ուրեմն աւելի մեծ պէտք է լինէր յաջորդ սերունդների յունասիրութիւնը, որոնք ասորական դպրոցի աշակերտութիւն չէին էլ ենթարկուած, այլ ուղղակի Հայաստանից ուղարկւում էին յունական դպրո-թեան և ուսման ամենահռչակաւոր կաղաքները — Աղեքսան-դրիա, Բիւզանդիոն: Այն-պէս Ս. Սահակ և Մեսրոպ, որոնք իրենք ևս սերունդ, առանձնութեամբ կապուած էին ասորա-կան դպրոցի ու գրութեան հետ ժամանակի ընթացքում քարեփոխեցին իրանց ուղղութիւնը և մօտեցան յունական գրութեան. սրան ամենալաւ ապացոյց, բայց ուրիշ ե-րևոյթներից, կարող է համարուել այն, որ Ս. Գրքի առա-ջին թարգմանութիւնը, որ եղել էր ասորերէնից՝ վերամշա-կեցին յունարէնի հետ բաղդատելով:

Այսքան ուրեմն փաստերը ցոյց են տալիս, որ յունա-կան ուսման ու գրութեան սէրը, յունասիրութիւնը, իբրև հակադրութիւն ասորասիրութեան, Հայաստանում սկսուել էր Ե. դարի [illegible] թուականներին և հետզհետէ գնալով զարգացաւ. և Ե. դարի վերջում սաստիկ յու-նասիրութիւնը ոչ միայն անախրօնիզմ չէ, այլ անխուսա-փելի հետևանք է նախընթաց սերունդների ուսումնա-կան ճանապարհորդութիւնների դէպի Յունաստան: Ղա-զար Փարպեցին, որ գրել է նոյնպէս Ե. դարի վերջերում, նոյնչափ սիրահար էր յունականութեան և արհամարհող ու ընդդէմ ասորականութեան. ինչո՞ւ նոյնպէս չէր կարող լինել և Խորենացին միևնոյն ժամանակ: Երբ այս երկու հեղինակները այդպիսի ոգով, ժամանակագրական կարգով

ուղղութեամբ այնքան նման են միմեանց. ինչո՞ւ գրելու ժա-մանակի վերաբերութեամբ պէտք է բաժանուին միմեան-ցից դարերով:

Իսկ աւելին պէտք է ասել. յունասիրութիւնը բնական է հայոց մատենագրութեան մէջ յատկապէս Ե. դարում, երբ եկեղեցիների մէջ դեռևս բաժանում չկար, երբ յոյն գրա-կանութիւնից հայոց գիտնականները յագեցնում էին իրանց ծարաւը, առանց կասկածելու, թէ նրա մէջ թոյն կըլինէր թաք-նուած: Իսկ Ե. դարից յետոյ, երբ հայոց եկեղեցին վճռա-պէս անջատուեց յունականից՝ երբ ատելութիւն, փոխադարձ ատելութիւն, հալածանքներ սկսեցին երկար դար երկու ազ-գերի յարաբերութեան մէջ՝ այսպիսի յունասիրութիւնը ան-բնական կըլինէր, եթէ ոչ անկարելի:

Պրոֆ. Մառի նկարած միւս երևոյթը, այն է՝ որ Խորենա-ցին կռւում է ասորականութեան դէմ հակառակ է գու-գալիս նրա այն մտքին, թէ Խորենացին գրել է այնպիսի ժամանակ՝ երբ քաղաքական ասորական ուղղութիւնը ա-ւանդութեան կարգն էր անցած: Երբ "ասորական գրութեան համբաւը դեռ չէր թուլացել Հայաստանում" նշանա-կում է, որ նա դեռ աւանդութեան կարգը չէր անցել. կռւում են, վիճում են գոյութիւն ունեցող հակառակորդի հետ, և ոչ թէ աւանդութեան կարգն անցած, գոյութիւն ունենալուց դադարած մի դպրոցի հետ: Այս երևոյթը պարզելը մեզ պէտք է բերէ բոլորովին հակառակ եզրա-կացութեան — այսինքն որ Խորենացու ժամանակը Ե. դա-րի վերջն է, երբ դեռ ասորական ուղղութեան ներկայա-ցուցիչներ կային, երբ ասորական դպրոցը դեռ բաւական ուժեղ դասը էր ներկայացնում, որ պէտք էր կռուել, նշանակութիւնը նուազեցնելու աշխատել:–

Ասորական աղբիւրներ գործածելը, որ Խորենացին գործա-

մաքրութեամբ է անում ժառանգաւորները) երբ կարող է միթէ նշանակել՝ այդ այն է, որ Խորենացին Ե. դարի հեղինակ է, երբ ասորական գրականութեան ազդեցութիւնը դեռ բացառ չէր անհետացել:

Ինչ վերաբերում է Պատմութեան լեզուին, որի մէջ յու-նայի բառաձևերը և դարձ. Սա նկատում են նշաններ այդ Պատմութեան ուշ ժամանակի գրուածք լինելու՝ պէտք է ասել, որ բերուած միջանի օրինակները բաւական չեն համոզելու, թէ այդ լեզուն Ե. դարին չէ պատկանում: Խորենացու լեզուի մէջ չկան այնպիսի երևոյթներ, ոչ բառական-մական և ոչ քերականական, որոնք չպատկանէին Ե. դարում գոյութիւն ունենալ և գործածուել: Երբ ինչպէս առնենք Ե. դարում գրուած կամ թարգմանուած բազմաթիւ երկերը [illegible], սկսելով մեր Մաշտոցից մինչև աշխարհաբարի պարկութեան հասնող Ղ. Փարպեցին, անհասկանալի-յունաբան Դաւիթ Անյաղթից մինչև Ներկ(?) ժողովրդական Փաւստոսից չենք կարծանայ, որ այդ դարում գրուած լինի Խորենացու Պատմութիւնը, որի մէջ դրսևորւում է դիրոգական(?) արուեստականութիւն և կատարեալ յունաբանութիւն, միանգամայն մատենագրական նուրբ ճաշակ:- Ահա ինչ է ասում Խորենացու լեզուի մասին Նորայր Բիւզանդացին, որ դուլ ամենահեղինակաւոր անձն է մեր հին մատենագիրների լեզուի նկատմամբ. «Ինչ թէ որչափ է Խորենացու լեզուն կամ ոճը, պարզապէս չկայ, որ մերթ առ և մերթ առն՝ չար հետք չմնայ ի սխալնելի հայկաբանութենէ յետնեալ ազգերոցս Հռոմայ և Պարսից... Հայոց երբ էր բոլոր ամենայն դասական (classique), ունի այնպիսի առաւելութիւններ և գեղեցկութիւններ, զորս ընդունայն է փնտռել ի գրութիւնս Եղիշէեայց, Եզնիկեայց, Կորիւնեայց և Փարպեցւոյ, քան թէ ի Պատմագրութիւնս Եօթներորդ-

-րորդ դարուց... որոց անկարելութիւն անգամ բողոք չէ Խորենացի, որ կարող ըլլայ իրեն հաւատարեցնել»: («Մշակ», 1898, № 192):

Անտեսում ենք ուրեմն, որ մինչև այժմ եղած քննութիւններին մէջ չկան այնպիսիները, որոնք հաւաստիքէին Պատմութեան գրութեան ժամանակը աւանդական Ե. դարից բացնելու մինչև Է-Ը դարերը: Բերուած բազմաթիւ փաստերը, որոնք իբր երևոյթին անհերքելի են՝ մանրամասն քննութեամբ հերքւում են: Բայց կան. բաւական թուով հակառակ փաստեր, որոնք վերին աստիճանի անհաւանական, նոյն-իսկ անկարելի են դարձնում Պատմութեան գրուելու ժամանակը մինչև Է-Ը դարերը քաշելը: Հետաքրքրական է այս փաստերը լսել մի եւրոպայի հմուտ հայագէտ Քերանից(?), որ նոր հայեացքի ընդունելուց յետոյ նորից դարձել է նախկին աւանդական հայեացքին Պատմութեան գրուելու ժամանակի նկատմամբ: Ահա թէ ինչ է ասում Կոնիբիր(?) այս մասին առիթով.-

«Երկար ժամանակ ընդունած էի ես ուսուցչացս Կարրիէրի կարծիքը, բայց միշտ անհանգիստ կզգայի մտքիս, թէ այսպէս կարծելով՝ անհնար և անստոյգ բան մը ընդունած կըլլամ, գտնելով գրական կարմանակ(?). վասնզի այս երևակայութեամբ հիմնուողին այս և այլ պարագաներ այլ, որ իրբենց նման չունին: Ընդունած ըլլալով ասոր, թէ անծանօթ մէկ մը իբր 760-ին կարգադրեց իր հայրենեաց պատմութիւնը մինչև 450 (յ.Ք.) տարին, ծայրէ ծայր իբր գրեաց մտնելով իրեն գոյութեան այն երանգն, ոճը, նախապաշարմունքը և սովորական(?) պայմանները, որոնք, որչափ գիտենք՝ գտուցիւ կայիրէին ի Հայս Ե. դարում:

«Ե. ընդունած ըլլամ, թէ Ը. դարու մատենագիրն, թէև իւր գործը ցուցնէ թէ ժամանակակից մըն է, և թէև ծրագիր [illegible] Ե. դարու մեծանուն գրող մը ըլլալու էր-հրաշագա-րծ

դում և ընկալագրութենէ կարծ շատ կոչյ մշակեալ (?), ամենայն տեղ մեալ անհնարինութիւն անգամ չըներ այն ամեն կրկնե-ցուցիչ դէպքերուն, որոնք պատահեցան 450-էն մինչև 750։ Օ-րինակի համար՝ իր գործոյն ուսարդը յուշիկ ողջ մը, որ ամեն ընթերցողի միրտը կշարժէ, գրած է այն յծբարկութեանց վրայ, որ 451-ին (?) պատահեցան. բայց իր սիրոյն ամենևին շար-ժած չեն երևար այն աւելի մեծագոյն յծբարկութիւնք, որ տիրեցան Արաբական աշխարհակալութենէն։ Ցրօնական իրե-րու մէջ իր գրութիւնը կցուցնէ կինքը բուռն և կայր կուսա-կից մը. բայց իր անյանձն արշագանք մը հասած չէ Քաղ-կեդոնական ժողովին, որ իր հայրենակիցները դաշն ու վրայ արաւ 500-էն առաջ։ Այն 750-ին, երբ գրած ըլլալու է՝ ամեն հայ մեծապատ կիներ նոյն վէճին արշագանքներով, և Ներքեսպիր Հայոց ու Հոյրապայ Համառօտութիւնն, որ-մէ օրինակած կ'րուներ այնպէս դիւրութեր կը է այս ամենով։ Նախայն իր ընդարձակ և երկարութեան մէջ ամենագոյն անհարկութիւն մանգամ կայ։

«Գ. Կարելի կ'ընդունիլ - և աւելի ևս Ը. դարուն - հայ վանա-կան մը, որ երբ նայած է գրելու հետաւոր անցեալի մը ժա-մանակագրութիւնը՝ կրցած ըլլայ վերանալ, անգամ ինքնիր ու կա-ռուցել այն ամենէն, որ իր շուրջն ու առջևն էր, և ինք այդ անցեալին մէջ կարդեալ տեսակական ժամանա-կած մը։ Նա միայն կպատմէ 400-450-ի դէպքերը, այլ և ընդա-րակէ ամենայն իր ունեցած մտածութիւնն, այնպիսի ինքն-րակութեանը և հնարուական ներունեան, որ երևէ չի հայտնի քան անհամաձայն չի ժխտելի նոյն դարու հաւ-քալու կեանքարութեան։ Թէև գրած ըլլայ իր 750-ին, կր-ցած ըլլալու է իր նկարագրութեանց 400-450 շրջանին այն-պէս մշակութեան յէլեր, որ Բաղամկայ, Եղիշէ, Ղազար Փար-պեցիոյ, Կորեան ուսումնասիրութեանց կռանէ անցեր մ.

խորենացւոյ գիրքն ուսումնասիրելու առանց ամենևին կասկած, թէ կրնանք մը ժամանակագիրք հեղինակներէն անցած Ը կամ Թ դարուն։ Թէկկէրեն իր մէջ վիրագրութեան մէջ իրեն նախապատ-րաւ Եղիշէ օրինակելու Ջենայ թագաւորի (1702-1714) դարուն ձևերն ու ոճուն, և իր նորագիւտ քաղուեան մեծ գործ մը ըն-կալուելու ամենէն։ Բայց Ռնոսեան Երևոյին առնելու ճարտ-կութեան մէջ՝ Թէկկէրեն անհրաժեշտ մէջ ընկլյա՝ երբ համե-մատուր Ը դարուն գրող այս հայ վանականին հետ, որ կենդե-ցաւ՝ Ե. դարու ոճով գրելու յետնագեալ ըլլալ։ Կերթէր ապա-ցել, որ այս Ը դարու պարմագրին ալ հանձարեղ գրող մը իր ժամանակակիցներէն շատ վեր ու նշանաւոր ըլլար իր նկարա-գրութիւններովն։ Բայց այսպէս չի գտնուիր. իր ժամանա-կակից իւրև Հեթումագրեալ գործ կցեցնել ուզած կրել ըլ-լալ Համառօտութիւն մը (Ներքեսպիր Հայոց և Հոյրապայ է. դարու քաղաքանութեան), որ թէ օր առաջ կայ գտած էր. Բայց պատահական ինչպէս իրեն նոյնպէս ամենուն վերաբեր-կալ։

« «Ուսուցանութեան կարծերու ենթադրութեամբ այսպիսի գրական կարծանացիներ ընդունել պէտք է ըլլալ։ Կրնու հանգերը՝ ժամանակ մինչև ալ համոզել երեցան իր փաստերը։ Ներաի եմ, որ կրցայ ապացուցել այն ենթադրական կռծին, որ ան-խուսափելի կ'երևար և սակայն այնպէս դժուարութիւններ կպարունակէր»։ (Հանդէս ամս., 1902, Մարտ)։

Այս ենթադրութիւններու վրայ աւելցնելու է և մի ուրիշ ենթադրութիւն, որին պէտք է ընդհարուելին՝ երբ Խորենացու Պատմութեան Է-Ը դարերը գործ համարէին։ Կարծեմ թէ իր Ե. դարում ապրել է մի նշանաւոր հայ մատենագիր Մովսէս անունով, որին յիշում են Ե. դարում Ղ. Փարպեցի (Թղթ. նեցի ...րբոյն Մովսէս» և այլն, տես երես 178)։ Այն յիշում է և մի այլ իմանագրի կոչելով Նրանիքերողապաշտ

երանելի Մովսէս եպիսկոպոս", համարելով նրան Բագրեւանդի և Արշարունեաց եպիսկոպոս Ե. դարում: Մեր կողմից՝ հաւանական է, որ Է-Ը դարում Հայոց պատմութիւնը գրող հեղինակը չէր կոչուել Մովսէս Խորենացի. (որովհետև անհնարելի էր, որ նա Է-Ը դարերում իր մասին ակնարկէր, թէ ես աշակերտել եմ Ս. Մեսրոպին և նրա հրամանով Աղեքսանդրիա եմ գնացել սովորելու), այլ անշուշտ այդ անծանօթ հեղինակը մատենագրական կեղծիք պէտք է գործէր և իր շարադրած Հայոց պատմութիւնը վերագրէր Ե. դարում ապրած Մովսէս Քերթողահօրը: Այս այսպէս լինելով, բնականաբար պահանջուէր, որ այդ անծանօթը Հայոց պատմութեան մէջ Մովսէս Քերթողահօրը այնպէս դուրս բերէր, որ կարդացողը հաւատար, թէ նա՝ Ղ. փարպեցու և ուրիշների յիշած Մովսէսն է. օրինակ, պէտք է յիշէր նրան իբրև եպիսկոպոս, պէտք է յիշէր, որ նա հալածուած է ոգէր աբեղաներից և այլն: Այն-ինչ այս բաները չկան Հայոց պատմութեան մէջ:- Բայց գլխաւորն այն է, որ այս դէպքում մեր առաջ կբացուէր այսպիսի երևոյթ. մի կողմից՝ Ե. դարում ապրած է լինում մի շատ նշանաւոր մատենագիր, Մովսէս անունով, լուսաւորիչ, ոգե-րահալած գրքերի հեղինակ, բայց ոչ մի տեղեկութիւն նրա մասին, ոչ մի պատառիկ նրա այդ ոգերահալած գրքերից մեր ձեռքը չէ հասնում. իսկ միւս կողմից՝ Է-Ը դարերում լոյս աշխարհ է ելնում Մովսէսի անունով մի շատ նշանաւոր մատենագրութիւն, որի նմանը չկայ մեր բոլոր գրականութեան մէջ - անյայտ հեղինակի գործ: Երկու դէպքն էլ վերին աստիճանի անհաւանական են:

Յիշենք վերջապէս և այն, որ Հայոց պատմութեան մէջ հեղինակը ոչ միայն վկայում է իր իբրև Ս. Սահակի և Մեսրոպի աշակերտի մասին, այլ և պատմական դէպքերի մէջ երևում է իր անձնաւորութեամբ այնպիսի կերպով, որ միայն ժամանակակիցը կարող էր անել: Օրինակ, երբ պատմում է Վաղա-

Մաշտոցի երկրորդ թարգմանութեան ձեռնարկելու փորձը՝ աւելացնում է. "Բայց քանզի անգէտ էին մերում արուեստի՝ ի բազում ժամանակս Երացեալ գործն գտանէր" (Գ. կա): Թարգմանիչներն Բիւզանդիոն գնալը Հայոց մեծերի՝ ամեն մի խմբին մի փուլ է ցնում. Յովսէփն ու Եզնիկը գնում են այնտեղ առանց ուսուցիչների թոյլտւութեան. Ղևոնդն ու Կորիւնը գնում են նոցա նախանձելով, կարգեալ իրանց կամքով. Յոհանն ու Արձանն ուսուցիչները ուղարկած են լինում առաջուց. Բայց արանքէ էլ "յուշաբար ուղևորեալ՝ և ծուլաբար գեղերեալ" ժամանակ են վարժում Կեսարիայում: Այսպիսի տեղեկութիւններ կարող էր հաղորդել միայն ժամանակակից հեղինակը, որ անձնական շահագրգռութիւն ունէր՝ իր ընկերակիցների վրայ մրմռուք չգցելու և իրեն իրան իբրև ամենայառաջադէմ և ամենասիրելի աշակերտ ներկայացնելու: Իսկ Է-Ը դարերում գրող անյայտ հեղինակի համար հոգեբանօրէն անհնարելի էր Ս. Սահակին, Մեսրոպին և նրանց առաջ աշակերտներին կոչել "անգէտ մերում արուեստի", այսուեր չգցել երանելի թարգմանիչների վրայ յօգուտ Մովսէս Խորենացու, որին ոչ տեսել էր և ոչ ճանաչում: Բարձեալ միայն ժամանակակից հեղինակը կարող էր Ողբի մէջ բացականչել. "Ուր կուսարք զորանցն ժողովուրդ՝ առ բարի աշակերտացն հանգիստ... ոչ հայրականն բարքառեալ կուարձութիւն՝ մատուցէ ինձ յաղթահարեալ յորդւոյս": Ժամանակակից հեղինակի արդէն չա-ոչ էին բղխել այն դառն, յանդիմանական դանգատները, որ ուղղուած են հայ ժողովրդին՝ իր վերաբերութեամբ ան-դարբեր, այլ և ընտանական դէրք բռնելուն պարծանօք: "Եւ չի այսուհետև զշմարիտ այսպէս, միաբանեալ մեռուք վրանգիտե և մեք... Արդ երբ լինի տեսցես Վարուժայ, ևորք ի թագաւորութեանէ յաշտա Վարուժայ կրկնեալ նուաստացուցին՝ այս է, այլ կեն մեր բանս առ Վարուժայ յա-

ղաքս ի չէնջ վկանդրյա՝ որոց վկանդէ և աշխարութեան սերա-
կանէ: Այլ սակայն ասացից. Ո՞վ որ ի չէնջ բռնաւ վասն մեր,
ո՞վ որ վարդապետացն մաղթանս, ո՞վ որ քան յօժարեցուցանողական
ցորդորական. ո՞վ որ յերրակս մեր քեռնաքարչս, ո՞վ որ ի մաքն
մերում հանդիսից, ո՞վ որ զուն զամ օրանց մեզ պատրաստեալ:
Թողից զայն, զի և ոչ ըստեղծս զարս և զդիրութիւնս, հան-
դերձ սնորի փառաւորութեամբն և զարարի ցեղութեանութեամբն
սանձահարեցէք. այլ նիք նոյս անմրութեան զչեր ոստմնա-
րեացդ դալով քարս՝ քրքրեցէք առաւել քան զխնոյն քա-
քեղոճնի" (Բ, ղԲ):

Ընդունելի է ենթադրել, որ Է–Ը դարի անծանօթ հեղի-
նակից իրան համար անծանօթ Մովսէսի քերթանը այսպիսի խօս-
քեր գրէր. այս խօսքերն ասելու համար՝ մարդ պէտք է ինքն
զգացած լինի իրական դառնութիւնը, որոնց պէտք է այրուած
լինի, և "ի յաւելուածոյ սրտի" խօսի:

Այս բոլոր փաստերը ու դատողութիւնների հիման վրայ
մենք հարկադրուած ենք խոստովանել անունը որոշ ժամանակով համա-
րել Է դարի գործ, Է դարում ապրած նշանաւոր մատենագիր
քերթողահայր և փիլիսոփայ Երանելի Մովսէսից շարադրուած:

Այսպիսով հետազօտութիւնները անկուշտ վերադարձնականում են
պարզել ժամանակին գրուելու ժամանակի հարցը, որ ներկայ-
ումս դեռ լինելութեան առարկայ է: Ինչ էլ որ լինի վերջնական
եզրակացութիւնը — բաւական է որ նա միանգամայն կարանեցի
և ճշմարիտ լինի — պէտք է մեզ ընդունելի լինի: Ոչ կանխակալ-
կարծութիւն, ոչ մոլեռանդութիւն, ոչ ազգային հեղծ ու [illegible]
և ոչ նոր գիւտ անելու ձգտումն չպէտք է մեզ [illegible]
հետևող ժամանակակից — մարդ լինելու թեամբութիւն պէտք է
լինին մեզ ուղեցոյց, այլ միմիայն սէրը դէպի ճշմարիտը, որ բո-
լոր գիտութիւնների էլ նպատակակէտն է:

ՀՀ Ազգային գրադարան
NL0373305

64.435